**Լրացուցիչ համաձայնագիր 122118506 № առ** 01 / 06 / 2022 **«Կորպորատիվ բյուջե» ծառայության մատուցման մասին**

Հավելված 2

**«Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետև՝ «Օպերատոր», ի դեմս Լիզորված անձ՝ Վազգեն Կարապետյանի, մի կողմից, և Կադաստրի Կոմիտեն, այսուհետև «Ընկերություն, ի դեմս_ Գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյանի այսուհետև՝ նաև «Աշխատակից», մյուս կողմից, կնքեցին սույն Լրացուցիչ համաձայնագիրը, այսուհետև շարժական կապի պայմանագրային /կանխավճարային/ համակարգի ծառայությունների մատուցման №** 122118506 **առ** 01/06 2022 **թ.Պայմանագրի «Համաձայնագիր», այսուհետև՝ «Պայմանագիր», հետևյալի մասին՝**

1. Օգտագործվող հասկացություններ՝

1.1. **Ընկերություն** (Բաժանորդ - Ընկերություն)՝ իրավաբանական անձ, որը կնքել է շարժական կապի պայմանագրային /կանխավճարային/ համակարգի ծառայությունների մատուցման № 122118506 առ 01/06/2022թ.Պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր):

1.2. **Աշխատակից**՝ Ընկերության աշխատակից, որը հանդիսանում է Բաժանորդ-Ընկերություն Պայմանագրով տրամադրվող Դիմումի մեջ նշված հեռախոսահամարների փաստացի օգտագործողը, որը Ընկերության կողմից միացված է Ծառայությանը և Բյուջեից դուրս ստացված կանխավճարային վճարման տեսակի կապի ծառայության Պայմանագիր է կնքել:

1.3. ,**Կորպորատիվ բյուջե ծառայություն**՝ Պայմանագրով Բաժանորդի-Ընկերության կողմից Բյուջեի սահմաններում բջջային կապի ծառայության ստացումը և Պայմանագրով Աշխատակցի կողմից Բյուջեից դուրս բջջային կապի ծառայության ստացումը:

1.4. **Ընկերությանը մատուցվող կապի ծառայություններ**՝ Բյուջեի սահմաններում մատուցվող կապի ծառայություններ:

1.5. **Աշխատակցին մատուցվող կապի ծառայություններ**՝ Բյուջեից դուրս մատուցվող կապի ծառայություններ:

1.6. **Բյուջե**՝ Ընկերությանը մատուցվող և Ընկերության հաշվին վճարվող կապի ծառայությունների ծավալ: Բյուջեից դուրս ստացված կապի ծառայությունները համարվում են Աշխատակցին մատուցվող և վճարվում են Աշխատակցի կողմից ինքնուրույն:

Եթե Բյուջեից դուրս Աշխատակցի հաշվին չկա գումար, ապա հեռախոսահամարը արգելափակվում է մինև հաշվի լիցքավորումը: Նոր ամսվա սկսելուց հեռախոսահամարը հանվում է արգելափակումից մինչ Բյուջեի ծավալի հերթական օգտագործումը:

2. ,Կորպորատիվ բյուջե ծառայության շրջանակներում տրվում է ամսեկան բյուջեի ծավալ ցանկացած գումարի չափով, որը նշվում է յուրաքանչյուր Աշխատակցի համար նախատեսված դիմումում:

Չծախսված բյուջեի գումարը չի փոխանցվում հաջորդ օրացուցային ամիս և հաշվետու ամսվա վերջին օրը զրոյացվում է:

3. Ստորագրելով սույն Համաձայնագիրը՝ Աշխատակիցը հաստատում է Պայմանագրով իր վրա վերցված համապատասխան պարտականությունների ստանձնումն այն պայմանների մասով, որոնք սահմանված են սույն Համաձայնագրով այն հեռախոսահամարի օգտագործման համար, որը նշված է 1.2 կետում և երաշխավորում է դրանց կատարումը:

4. Կողմերը համաձայնում են, որ Բյուջեի հաստատումն իրականացվում է բացառապես Ընկերության համաձայնությամբ: Ընկերությունն իրավունք ունի միացնել ցանկացած Ընտրական համարի ,Կորպորատիվ բյուջե ծառայությունը, որը մատուցվում է Ընկերության կողմից Պայմանագրով: Կողմերը նաև համաձայնում են, որ Աշխատակցի, սույն Համաձայնագրի 1.2 կետում նշված հեռախոսահամարով բջջային կապի լրացուցիչ ծառայությունների մատուցման (միացման/անջատման) համար, անհրաժեշտ է Ընկերության պաշտոնական համաձայնությունը:

4.1. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում (օրացուցային ամիս, որտեղ մատուցվում են կապի ծառայություններ) Ընկերությունը կարող է նախաձեռնել Բյուջեի չափի փոփոխություն Օպերատորի կողմից սահմանված կարգով:

4.2. ,Կորպորատիվ բյուջե ծառայության մատուցման սույն Համաձայնագրի լուծման դեպքում սույն Համաձայնագրում նշված հեռախոսահամարը պահպանվում է Ընկերության համար, իսկ եթե այն Աշխատակցի անունով է, ապա Աշխատակցի համար, ովքեր իրավունք ունեն տեղափոխել այն ցանկացած գործող սակագնային պլանին՝ Պայմանագրին համապատասխան:

Այն դեպքում, երբ Ընկերությունը հրաժարվում է հեռախոսահամարից, Աշխատակիցը գործող Պայմանագրի և սույն Համաձայնագրի շրջանակներում իրավունք ունի կնքել այդ հեռախոսահամարի համար բաժանորդային պայմանագիր Օպերատորի հետ, այնպես որպես ինքնուրույն ֆիզիկական անձ:

Դրա հետ մեկտեղ Ընկերության մոտ պահպանվում են պարտավորություններն Օպերատորի առջև՝ Ընկերությանը մատուցած կապի ծառայությունների դիմաց ավելի վաղ ներկայացված հաշիվների վճարման հետ կապված:

**5. Հաշվարկների կարգ**:

5.1. Մատուցված կապի ծառայությունների համապատասխան հաշիվները տրամադրվում են Ընկերությանը և վճարվում են Պայմանագրի պայմաններին համապատասխան:

5.2. Ընկերությանը ներկայացվող կապի ծառայությունների հաշիվը պարունակում է Բյուջեի սահմաններում մատուցված կապի ծառայությունների հաշվեգրումների, ինչպես նաև ,Կորպորատիվ բյուջե՚ ծառայությանը չմիացված հեռախոսահամարների կապի ծառայությունների հաշվեգրումների ընդհանուր գումարը: Ընկերությանը ներկայացվող հաշիվները չեն պարունակում սույն Համաձայնագրի շրջանակներում Աշխատակցին մատուցված Կապի ծառայությունների հաշվեգրումների մասին տեղեկատվություն:

5.3. Աշխատակիցը պետք է բյուջեի սահմանները գերազանցելու դեպքում ինքնուրույն լիցքավորի հաշիվը, որպեսզի կարողանա շարունակել օգտվել բջջային կապի ծառայություններից:

5.4. Հաշիվների վճարումը կատարվում է Ընկերության կողմից՝ ըստ Ընկերությանը ներկայացված հաշվի, իսկ Աշխատակցի կողմից՝ թույլատրելի սահմանը գերազանցելու դեպքում՝ համապատասխան Պայմանագրին և Պայմանագրով սահմանված կարգով:

5.5. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո Ընկերությունը պարտավորում է առաջին ամսվա համար իր Աշխատակիցների համար նախատեսված Բյուջեի ծավալը ընդհանուր փոխանցել Օպերատորի հաշվին՝ որպես կանխավճար:

6. **Կողմերի պատասխանատվությունը**:

6.1. Ընկերության կողմից հաշիվների վճարման ժամկետների խախտման դեպքում Օպերատորն իրավունք ունի Ընկերության բոլոր հեռախոսահամարներով Կապի ծառայությունների մատուցումը դադարեցնել՝ Պայմանագրին համապատասխան: Դրա հետ մեկտեղ Ընկերության մոտ պահպանվում են Ընկերությանը մատուցված Կապի ծառայությունների ավելի վաղ ներկայացված հաշիվների վճարման պարտավորությունը: Աշխատակիցը պատասխանատվություն չի կրում Ընկերությանը մատուցված բջջային կապի ծառայությունների վճարման համար ,Կորպորատիվ բյուջե՚ ծառայության շրջանակներում:

6.2. Աշխատակցի կողմից թույլատրելի սահմանի գերազանցման դեպքում կապի ծառայությունից օգտվել շարունակելու համար Աշխատողը պետք է ինքնուրույն կատարի համապատասխան լիցքավորում:

6.3. Ստորագրելով սույն Համաձայնագիրը՝ Աշխատակիցը երաշխավորում է, որ ծանոթացել է Պայմանագրի, Համաձայնագրի պայմաններին և Օպերատորի Ծառայությունների մատուցման պայմանների հետ և համաձայնվում է դրանց հետ: Այն դեպքում, երբ Աշխատակիցը հրաժարվում է Պայմանագրի և/կամ սույն Համաձայնագրի պայմանների կատարումից՝ պատճառաբանելով, որ ամբողջ վերոնշյալ տեղեկատվությունը չի ծանուցվել իրեն, կամ հրաժարվելով սույն Համաձայնագիրը կնքելու փաստից, Ընկերությունը կրում է համապարտ պատասխանատվություն Աշխատակցի կողմից Պայմանագրի և սույն Համաձայնագրի պայմանները կատարելու համար:

6.4. Ընկերությունը երաշխավորում է իր Աշխատակիցների ժամանակին ծանուցումը Բյուջեի փոփոխման իր մտադրությունների մասին: Ցանկացած դեպքում Բյուջեի չափի ցանկացած փոփոխություն, ինչպես նաև ,Կորպորատիվ բյուջե՚ ծառայության մատուցման այլ պայմաններ կձևակերպվեն առանձին, կողմերի կողմից ստորագրված սույն Համաձայնագրի լրացման մեջ, որը կհանդիսանա դրա անբաժանելի մասը:

7. **Եզրափակիչ դրույթներ**

7.1. Ստորագրելով սույն Համաձայնագիրը՝ Ընկերությունը և Աշխատակիցն անվերապահորեն համաձայնվում են ,Կորպորատիվ բյուջե՚ ծառայության մատուցման պայմանների հետ:

7.2.. Սույն Համաձայնագիրը կարող է լուծվել, իսկ ,Կորպորատիվ բյուջե՚ ծառայության մատուցումը դադարեցվել Օպերատորի և Ընկերության կողմից փոխադարձ համաձայնությամբ: Դրա հետ մեկտեղ Ընկերության նախաձեռնությամբ Համաձայնագրի լուծման դեպքում վերջինս պարտավորվում է համաձայնեցնել այդ մտադրությունն Աշխատակցի հետ: Ընկերությունը պարտավորվում է նաև տեղեկացնել Օպերատորին Աշխատակցի կողմից սույն Համաձայնագրի լուծման նախաձեռնության մասին: Այդ դեպքում Աշխատակցի կողմից Համաձայնագրի լուծման նախաձեռնողը համարվում է Ընկերությունը: Համաձայնագրի լուծման հետ կապված, ինչպես նաև ,Կորպորատիվ բյուջե՚ ծառայության մատուցման պայմաններին վերաբերող հարցերով Աշխատակցի հետ բոլոր տարաձայնությունները կարգավորվում են Ընկերության և Աշխատակցի միջև ինքնուրույն: Օպերատորը ոչ մի պատասխանատվություն չի կրում Ընկերության և Աշխատակցի միջև սույն Համաձայնագրի կատարման հետ կապված տարաձայնությունների և վեճերի առաջացման համար:

7.3. Սույն Համաձայնագիրը կարող է լուծվել այն դեպքում, երբ ,Տելեկոմ Արմենիա՚ ՓԲԸ-ն դադարեցնի ,Կորպորատիվ բյուջե՚ ծառայության մատուցումը:

7.4. Պայմանագրի լուծման ցանկացած դեպքում սույն Համաձայնագիրն ավտոմատ ձևով դադարեցնում է իր գործողությունը:

7.5. Բոլոր մյուս դեպքերում, որոնք չեն կարգավորվում սույն Համաձայնագրով, Կողմերը ղեկավարվում են Պայմանագրի պայմաններով:

7.6. Սույն Համաձայնագրով նախատեսվող ծառայությունը մատուցվում է սույն Համաձայնագրի ստորագրման պահից:

7.7. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է շարժական կապի պայմանագրային /կանխավճարային/ համակարգի ծառայությունների մատուցման № ________ առ ________ 20_ թ. Պայմանագրի անբաժանելի մասը:

7.8. Սույն Համաձայնագրի բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է գրավոր ձևակերպված լինեն առանձին հավելվածում, որը պետք է պատշաճ ձևով ստորագրված լինի կողմերի կողմից:

«Օպերատոր»
«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ազատության 24/1, 375014
Բանկ Հայէկոնոմբանկ
h/h 163004038861
ՀՎՀՀ 02500052
Լիազորված անձ Վ.Կարապետյան

«Ընկերություն» / «Աշխատակից»
Կադաստրի կոմիտե.
Հասցե՝ Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011030815
ՀՎՀՀ 02534328
Գլխավոր քարտուղար
Միեր Խաչատրյան

## «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ հետվճարային/կանխավճարային շարժական կապի «Կորպորատիվ բյուջե» ծառայության մատուցման դիմում-հայտ

17. 05. 2022 թ

Բաժանորդային պայմանագիր BAN 122118506;
/ BAN /

Բաժանորդ Կադաստրի Կոմիտե
/ Անվանում /

ՀՎՀՀ 02534328

Գրանցման հասցե ք.Երևան Արշակունյաց 7

Կոնտակտային համար/ Էլ. փոստ +374 60474142 / gnumner@cadastre.am,

Հեռախոսահամար(ներ)/

| N | Հեռախոսահամար | Քարտի սերիական համար | Սակագնային պլան | Ամսական տրամադրվող բյուջե յուրաքանչյուր հեռախոսահամարին ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|---|
| 1 | 374 33 357457 | 893740100022650971 | Պրո 3 PLE - 5200 | 10 000 |
| 2 | 374 91 103479 | 893740100022700023 | Պրո 1 PLE - 1900 | 10 000 |
| 3 | 374 33 100775 | 893740100022613086 | Պրո 1 PLE - 1900 | 10 000 |

| Ուղղությունը | v | Ամսական տրամադրվող ընդհանուր բյուջե (ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ) |
|---|---|---|
| Դեպի "ԱրմենՏել" ՓԲԸ բջջային ցանց | | 30 000 |
| Րոպեներ դեպի ՀՀ և ԼՂՀ այլ բջջային ցանցեր | | |
| Դեպի "ԱրմենՏել" ՓԲԸ ֆիքսված ցանց | | |
| Դեպի այլ ՀՀ և ԼՂՀ ֆիքսված ցանցեր, բացի "ԱրմենՏել" ՓԲԸ ֆիքսված ցանց | | |
| SMS դեպի ՀՀ և ԼՂՀ բջջային ցանցեր | | |
| MB (WAP, default, GPRS) | | |
| Միջազգային ելքային զանգեր | | |
| Միջազգային ելքային SMS | | |
| Բոլոր ուղղությունները, ներառյալ ռոումինգ | | |
| Ռոումինգ բոլոր ուղղություններով | | |

Հաստատում եմ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի (Օպերատոր) բաժանորդ դառնալու իմ ցանկությունը: Ծանոթացել եմ սույն դիմում-հայտի և բաժանորդային պայմանագրի անբաժանելի մասը կազմող Օպերատորի պաշտոնական կայքում զետեղված Հրապարակային օֆերտային (www.beeline.am/terms-and-conditions), սակագներին, մատուցման պայմաններին, Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականությանը և ամբողջությամբ ընդունում եմ դրանք:

**Օպերատոր**
«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան, 0014, Ազատության 24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02500052
Լիազորված անձ
Վազգեն Կարապետյան

Ստորագրություն

**Բաժանորդ**
Կադաստրի կոմիտե.
Հասցե՝ Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011030815
ՀՎՀՀ 02534328
Գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյան

Ստորագրություն